



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Tigran Mets 59, Vanadzor
Republic of Armenia
Tel.(հեռ.) (374 322) 4 22 68
E-mail hcav@hcav.am
E 2001

Ե /2012-24.10/363
24.10.2012 թ.

ՀՀ վճռաբեկ դատարան

Դիմումատու՝

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ

Պետական ռեգիստրի վկայական
03 Ա. 0704086

ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, 2001
Տիգրան Մեծի 59

Պատասխանող՝

ՀՀ գլխավոր դատախազություն

ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 5

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ

(ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012թ. հոկտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0119/11/12 որոշման դեմ)
Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

2012 թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նախագահող դատավոր Ա. Խաչատրյանի քննության առնելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) նախագահ Արթուր Սաքունցի բողոքը՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը բեկանելու, նոր դատական ակտ ընդունելու և ՀՀ Գլխավոր դատախազությանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թ. մայիսի 30-ի որոշումը կատարելուն պարտավորեցնելու մասին բողոքը՝ անբողջությամբ մերժեց:

1.Գործի դատավարական նախապատմություն

1.1. 2010 թ. սեպտեմբերի 19-ին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» «Հայաստանի հելսինկյան կոմիտե» և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ների նախագահների կողմից հանցագործության մասին

հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն (անձին ակնհայտ ապօրինի կալանավորելու և ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելու մասին):

1.2. Ներկայացված հանցագործության մասին հաղորդմանը ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետի կողմից ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի՝ «Ս. Պողոսյանը կալանավորվել է նրան հանձնելու նպատակով, այսինքն՝ կոնվեցիայի 5-րդ հոդվածի ոչ թե «գ» կետի, այլ «գ» կետի հիման վրա, որի դեպքում կոնվեցիան չի նախատեսում անձին անհապաղ դատավորի մոտ տանելու պահանջը»:

1.3. 2010 թ. դեկտեմբերի 10-ին նույն կազմակերպությունների նախագահները դիմում են ներկայացրել ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազին դիմումատուների կողմից ներկայացված հաղորդման հիման վրա հարուցել քրեական հետապնդում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետի նկատմամբ:

1.4. 2011 թ. հունվարի 18-ին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը ներկայացված դիմումը մերժել է:

1.5. 2011 թ. մարտի 25-ին նույն կազմակերպությունների նախագահների կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք վերը նշված դատական ակտի դեմ:

1.6. 2011 թ. մայիսի 30-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել է. բեկանել է ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թ. հունվարի 18-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել՝ վերացնել անձի իրավունքների ու ազատությունների խախտումները: 2011 թ. մայիսի 30-ի վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

1.7. 2012 թ. հունիսի 12-ին իմ կողմից ներկայացվել է դիմում ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով կատարել 2011 թ. մայիսի 30-ի ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը:

1.8. 2012 թ. հունիսի 25-ին ներկայացված դիմումին ի պատասխան ստացվել է պատասխան գրություն, ըստ որի՝ «..... գրությունում բարձրացված հարցերի վերաբերյալ Ձեզ մանրամասն պարզաբանումներ են տրվել մեր 05.10.2011 թ. թիվ 21/32-570-10 գրությամբ»:

1.9. ՀՀ գլխավոր դատախազության 05.10.2011 թ. թիվ 21/32-570-10 գրության հիմնական պատճառաբանությունը կայանում է նրանում, որ «ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 7-րդ կետի 3-րդ պարբերության համաձայն՝ «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման», իսկ Ս. Պողոսյանը քրեակատարողական հիմնարկ է տեղափոխվել ԱՄՆ Վերջինիա նահանգի Արևելյան Ռիչմոնդի շրջանային դատարանի կողմից տրված կալանքի սանկցիայի հիման վրա: ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն հստակեցնում՝ այս դեպքում անհրաժեշտ է ունենալ Հայաստանի Հանրապետության, թե այլ պետության դատարանի կողմից կայացված որոշում,....»:

1.10. 2012 թ. հուլիսի 26-ին Կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թ. մայիսի 30-ի որոշումը կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

1.11. 2012 թ. սեպտեմբերի 11-ին Դատարանը Կազմակերպության կողմից ներկայացված դիմումը մերժել է այն ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

1.12. 2012 թ. սեպտեմբերի 22-ին կազմակերպության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ:

1.13. 2012 թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժել է պատճառաբանելով, որ դատական ակտի կատարման պարտավորեցման հայցերը կարող են ներկայացվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով դատախազության անգործության բողոքարկման համար նախատեսված ժամկետներում և կարգով:

2. Վճռաբեկ բողոքի հիմնախնդիրները

2.1. Արդյոք ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշումները կատարելուն պարտավորեցնելու մասին դիմումների նկատմամբ կարող է տարածվել դատավարական ժամկետներ:

2.2. Արդյոք սույն գործով կիրառելի էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված դատավարական ժամկետները:

2.3. Արդյոք ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշումը չկատարելը հանցագործություն չէ:

3. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը

Վճռաբեկ բողոքը ներկայացվում է հետևյալ հիմքերով և հիմնավորումներով.

3.1) Դատարանը, մերժելով բողոքը, խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ, 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև (...) հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և

անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):»:

3.1.1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է նաև դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը զրկված է դատարանի մատչելիության իրավունքից, ուրեմն իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է: Ընդ որում այս եզրակացությունը հիմնված է 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները (տե՛ս *Golder v. The United Kingdom*, 1975թ. փետրվարի 21, գանգատ թիվ 4451/70, 28 և 36 կետեր):

Վերոնշյալ սահմանադրական, օրենսդրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ դատական պաշտպանության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունք է:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Էյրին ընդդեմ Իռլանդիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ուղղված է ոչ թե նրան, որ երաշխավորի տեսական կամ պատրանքային իրավունքներ, այլ որ երաշխավորի կենսագործելի ու արդյունավետ իրավունքներ: Մասնավորապես դա վերաբերում է դատարանի մատչելիության իրավունքին՝ հաշվի առնելով այն կարևոր տեղը, որը ժողովրդավարական հասարակությունում ունի արդար դատաքննության իրավունքը (տե՛ս *Airey v. Ireland*, 1979թ. հոկտեմբերի 9, գանգատ թիվ 6289/73, կետ 24):

Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարանն ղիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ ղիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է Պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումներն անձին վերապահված ղիմելու իրավունքն այնպես չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և եթե գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*Hirschhorn v. Romania*, 2007 թ. հուլիսի 26, գանգատ թիվ 29294/02, կետ 50):

Սույն դեպքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ Կազմակերպության ղիմումը մերժելու մասին որոշման հիմքում ընկած պատճառաբանությունը (սահմանափակումը), թե Կազմակերպությունը բաց է թողել դատավարական ժամկետները, սահմանափակում է դատարանն ղիմելու մատչելիության գործընթացը, որի արդյունքում խաթարվում է իրավունքի բուն էությունը ՀՀ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարման գործընթացում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ, որը ղիմել է դատարան, քրեական հետապնդման մարմիններին իր խախտված իրավունքների պաշտպանության համար, համարվում է ղիմող»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի հիման վրա կայացված որոշումները՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, պարտադիր կատարման ենթակա են ցանկացած սուբյեկտի կողմից և դրանց չկատարման համար օրենքով սահմանված են պատասխանատվության համապատասխան միջոցներ: Այսինքն՝ այն դեպքում, երբ դատարանը որոշում է կայացնում պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմինն վերացնելու անձի իրավունքների և ազատությունների խախտումը, ապա վարույթն իրականացնող մարմինը՝ այս դեպքում ՀՀ գլխավոր դատախազությունը, պարտավոր է կատարել դատարանի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

Միջազգային պրակտիկան նույնպես միարժեք վկայում է, որ իրավունքի գերակայության, հետևաբար և Սահմանադրության գերակայության, երաշխավորման գլխավոր նախապայմանը համապարտադիր, վերջնական և *erga omnes* բնույթ ունեցող դատական ակտերի կատարման երաշխավորումն է, ակտեր, որոնք իրավական բովանդակությունից զրկվում են առանց դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու:

3.1.2. ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության՝ ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման պարտավորեցման գործով դատավարական ժամկետներ սահմանելով և գործի քննությունը դատավարական ժամկետներով գործերի դաշտ տեղափոխելով, օրինականացրել են ՀՀ գլխավոր դատախազության կողմից կատարված հանցագործության փաստը:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում....

2) անձը չի կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատագրվմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Ըստ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առկա նախադեպային իրավունքի ուսումնասիրության (*Philis v. Greece, para.59, Golderv.the United Kingdom, paras. 34-36, Hornsby v. Greece, p. 40, DiPede v. Italy, paras. 20-24, Zappia v. Italy, paras.16-20, Immobiliare Saffi v. Italy, p. 66*), Եվրոպական դատարանը ներպետական դատական ատյանների որոշումների կատարման վերաբերյալ նշում է. «Ռատարանի իրավունքը» կլինի ոչ

որոշումների անվանումների և դրանցում առկա հիմնավորումների և իրավական դիրքորոշումների պարզ շարադրանքով չի ներկայացրել հիշյալ գործերի փաստական հանգամանքները, որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել հիշյալ գործերի և սույն գործի փաստական հանգամանքների նույնանման լինելու վերաբերյալ, արդյունքում չի պատճառաբանել, թե ինչու են դրանք կիրառելի սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, հետևաբար դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու համար:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործը քննելիս և լուծելիս դատարանի կողմից քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել կամ կարող էին ազդել սույն գործով ճիշտ որոշում կայացնելու վրա՝ թույլ չեն տրվել:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից սույն գործի շրջանակներում կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, այն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ, 103-րդ, 278-րդ, 290-րդ, 393-րդ և 395-րդ հոդվածներով Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

“Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ” ՀԿ-ի նախագահ Ա. Սաքունցի վերաքննիչ բողոքը մերժել:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012թ. սեպտեմբերի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ